

2995

Ի. ՍՏԱԼԻՆ

ԳԼԽԱՊՏՈՒՅՑ
ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

*
ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ
ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

ՊՐԵԿՈՒՄՀԱՏ • 1937 • ՑԵՐԵՎԱՆ

3K33
9-63

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

10 JUN 2005

5/53
P-63 ԿՊ

Ի. ԱՍԱԼԻՆ

20 NOV 2000

ԳԼԽԱՊՏՈՒՅՑ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ



ՀԱՅԿՈՒՄՀԱՏՈՒՄ 1937 ՅԵՐԵՎԱՆ

0005-AUG 2013

9995

ԳԼԽԱՊՏՈՒՅՑ՝ ՀԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Կոլտնեալին շարժման հարցերի ռուրը



И. СТАЛИН

ГОЛОВОКРУЖЕНИЕ ОТ УСПЕХОВ



ОТВЕТ ТОВАРИЩАМ КОЛХОЗНИКАМ

Армпартиздат, Ереван, 1937

Կոլտնառեսային շարժման բնագավառում Խորհրդային իշխանության ունեցած հաջողությունների մասին այժմ բոլորն են խոսում։ Մինչև անգամ թշնամիներն ստիպված են ընդունելու լուրջ հաջողությունների առկայությունը։ Իսկ այդ հաջողություններն երոք վոր մեծ են։

Սա փաստ է, վոր առ 20-ն փետրվարի ս. թ. ԽՍՀՄ-ում արդեն կոլեկտիվացված է գյուղացիական տնտեսությունների 50%-ը։ Այս նշանակում է, վոր առ 20-ն փետրվարի 1930 թվի մենք հնդամյա պլանը գերակատարել ենք ավելի քան յերկու անգամ։

Սա փաստ է, վոր առ այս տարվա փետրվարի 28-ը կոլտնտեսություններն արդեն կարողացել են գարնան ցանքերի համար ամբարել 36 միլիոն ցենտներից ավելի սերմացու, այսինքն՝ պլանի 90%-ից ավելին, այսինքն՝ մոտ 220 միլիոն փութ։ Զիկարելի չընդունել, վոր միմիայն կոլտնտեսային գծով 220 միլիոն փութ սերմացու հավաքելը՝ հացամթերման պլանը հաջող կատարելուց հետո ամենահսկայական նվաճում է ներկայացնում։ Ինչի՞ մասին ե խոսում այս ամենը։

Այն մասին, վոր գյուղի արմատական շրջադարձը դեպի սոցիալիզմ կարելի յե արդեն ապահովված համարել։

Կարեք չկա ապացուցելու, վոր այդ հաջողությունները մեծագույն նշանակություն ունեն մեր յերկրի բախտի համար, ամբողջ բանվոր գասակարգի՝ վորպես մեր յերկրի ղեկավար ուժի՝ համար, վերջապես, բուն իսկ կուսակցության համար։ Ել չխոսելով ուղղակի գործնական արդյունքների մասին, դրանք, այդ հաջողությունները, հսկայական նշանակություն՝ ունեն բուն իսկ կուսակցության ներքին կյանքի համար, մեր կուսակցության գասատարակության համար։ Նրանք մեր կուսակցությանն առույգության ե իր ուժերին հավատալու վորի յեն

Ներշնչում։ Նրանք բանվոր դասակարգին զինում են հավատով ղեպի մեր գործի հաղթությունը։ Նրանք մեր կուսակցությանն են մոտեցնում նոր միջոնանոց ռեզերվներ։

Այստեղից՝ կուսակցության խնդիրը—ամրացնել ձեռք բերված հաջողությունները և դրանք պլանաչափ կերպով ոգտագրութել հետագա առաջնապահման համար։

Բայց հաջողություններն ունեն նաև իրենց սովերուտ կողմը, մասավանդ յերբ նրանք համեմատաբար «Հեշտ» են ձեռք բերվում, այսպես ասած՝ «անակնկալի» կարգով։ Այդպիսի հաջողությունները յերբեմն ինքնահավանության ու մեծամտության վորդի յեն պատվառում։ «Մենք ամեն ինչ կարող ենք», «Մեղ համար ամեն ինչ դատարկ բան ե»։ Նրանք, այդ հաջողությունները, հաճախ արբեցնում են մարդկանց, ընդուրում մարդկանց գլուխը հաջողություններից սկսում ե պատվել, կորսվում ե չափի զգացումը, կորավում ե իրականությունը հասկանալու ընդունակությունը, յերեան ե դալիս իր ուժերը գերազնահատելու և հակառակորդի ուժերը թերագնահատելու ձգում, յերեան են դալիս սոցիալիստական շինարարության բոլոր հարցերը «մի ակնթարթում» լուծելու արկածախնդրական փորձեր։ Այստեղ արդեն տեղ չի մնում հոգաւու այն մասին, վորպեսզի ամրացնենք ձեռք բերված հաջողությունները և պլանաչափ ոգտագրութենք դրանք հետագա առաջնապահման համար։ Մենք ի՞նչ կարիք ունենք ամրացնելու ձեռք բերված հաջողությունները, —մենք այնպես ել կերպանանք «մի ակնթարթում» վազելով հասնել սոցիալիզմի լիակատար հաղթությանը։ «Մենք ամեն ինչ կարո՞ղ ենք», «Մեղ համար ամեն ինչ դատարկ բան ե»։

Այստեղից՝ կուսակցության խնդիրը—լճուական պայքար մղել գործի համար այդ վտանգավոր ու վնասակար տրամադրությունների դեմ և դրանք կուսակցությունից դուրս վռնդել։

Զի կարելի ասել, թե գործի համար այդ վտանգավոր ու վնասակար տրամադրությունները փոքրիշատե լայն տարածում ունեն մեր կուսակցության շարքերում։ Բայց նրանք, այդ տրամադրությունները, այնուամենայնիվ կան մեր կուսակցության մեջ, ընդուրում հիմքեր չկան պնդելու, թե նրանք չեն ուժեղանա։ Յեվ յեթե նրանք, այդ տրամադրությունները, մեզանում քաղաքացիության իրավունք ստանան, ապա կարելի յե չկասկածել, վոր կուստեսային շարժման գործը նշանակելիորեն կթուլացվի ու այդ շարժման վիճեցման վտանգը կարող ե իրականություն դառնալ։

Այստեղից՝ մեր մամուլի խնդիրները—սխտեմատիկաբարձր մերկացնել այս ու սրանց նման հակալենինյան տրամադրությունները։

Միքանի փաստ։

1. Մեր կոլտնտեսային քաղաքականության հաջողությունները բացատրվում են, ի միջի այլոց, նրանով, վոր նա, այդ քաղաքականությունը, և նվազում ե կոլտնտեսային շարժման կամավորականը ու ԽՍՀՄ-ի տարբեր ըզանների պայմանների բազմազանության հաշվառման վրա։ Կոլտնտեսություններն ուժով արմատավորել չի կարելի։ Դա հիմար ու ռեակցիոն բան կլիներ։ Կոլտնտեսային շարժումը պետք ե հենվի գյուղացիության հիմնական մասաների ակտիվ աջակցության վրա։ Զի կարելի զարգացած ըրջանների կոլտնտեսային շինարարության լավ որինակները մեխանիկորեն փոխադրել չզարգացած ըրջանները։ Դա հիմար ու ռեակցիոն բան կլիներ։ Այդպիսի «քաղաքականությունը» մի հարվածով պասկազերծ կաներ կոլեկտիվացման գաղափարը։ Կոլտնտեսային շինարարության տեմպն ու մեթոդները վորոշելիս հարկավոր ե ամենայն իննամքով հաշվի առնել պայմանների բազմազանությունը ԽՍՀՄ-ի տարբեր ըրջաններում։

Կոլտնտեսային շարժման մեջ մեզանում բոլոր ըրջաններից հատիկային ըրջաններն են առաջ կանգնած։ Ինչո՞ւ։ Նախ պատճառով, վոր մենք այդ ըրջաններում ունենք ամենից մեծ քանակով արդեն ամրապնդված խորհանտեսություններ ու կոլտնտեսություններ, վորոնց չնորհիվ գյուղացիները հնարավորություն ունենին համոզվելու նոր տեխնիկայի ուժին ու նշանակությանը, տնտեսության նոր, կոլեկտիվ կաղմակերպության ուժին ու նշանակությանը։ Յերկրորդ, այն պատճառով, վոր այդ ըրջանները հացամթերումների կամպանիաների ժամանակ կուլակության դեմ մղած պայքարի յերկամյա գպրոց են անցել, վորը չեր կարող չհեշտացնել կոլտնտեսային շարժման գործը։ Վերջապես այն պատճառով, վոր այդ ըրջաններին վերջին տարիների ընթացքում ամենաուժեղ կերպով լավագույն կաղերեր են ժամանակարգել արդյունաբերական կենտրոններից։

Կարելի՞ յե արդյոք ասել, թե այդ առանձնապես նպաստավոր պայմանները կան նաև ուրիշ ըրջաններում, որինակ՝ ապառղական ըրջաններում, ինչպիսիքն են մեր հյուսիսային մարզերը, կամ գեռես հետամնաց ազգությունների ըրջաններում, ինչպիսին ե, ասենք, թուրքեստանը։

Վ՛չ, այդ չի կարելի ասել։

Պարզ ե, վոր ԽՍՀՄ-ի տարբեր շրջանների պայմանների բաղմազանության հաշվառման սկզբունքը, կամավորության սկզբունքի հետ միասին, կոլտնտեսային առողջ շարժման ամենալուրջ նախադրյալներից մեկն ե:

Իսկ յերբեմն մեղ մոտ իրականում ի՞նչ ե տեղի ունենում: Կարելի՞ յե արդյոք ասել, թե կամավորության ու տեղական առանձնահատկությունների հաշվառման սկզբունքը չի խփում մի շարք շրջաններում: Վո՞չ, ցավոք սրտի այդ չի կարելի ասել: Հայտնի յե, որինակ, վոր սպառողական գոտու մի շարք հյուսիսային շրջաններում, վորտեղ անհապաղ կոլտնտեսություններ կազմակերպելու համար նպաստավոր պայմաններ համեմատարար ավելի քիչ կան, քան հատիկային շրջաններում, կոլտնտեսությունների կազմակերպման նախապարագատական աշխատանքը ջանում են հաճախ նենազավոխնել կոլտնտեսային շարժման չինովնիկական դեկրետագրումով, կոլտնտեսությունների ամաման վերաբերյալ թղթե բանաձեերով, թղթե կոլտնտեսությունների կազմակերպմամբ, կոլտնտեսություններ, վորոնք դեռ իրականության մեջ չկան, բայց վորոնց «գոյության» մասին կան մի կույտ սնապարծ բանաձեեր: Կամ վերցնենք թուրքեստանի միքանի շրջանները, վորտեղ անհապաղ կոլտնտեսություններ կազմակերպելու համար նպաստավոր պայմաններ ե՛լ ավելի քիչ կան, քան սպառողական գոտու հյուսիսային մարդերում: Հայտնի յե, վոր Թուրքեստանի մի շարք շրջաններում արդեն փորձեր են յեղել «հասնելու և անցնելու» ԽՍՀՄ-ի առաջավոր շրջաններից՝ զինվորական ուժով սպանալու միջոցով, վոռոգման ջրից ու արդյունաբերական ապրանքներից այն վյուղացիներին զրկելու սպանալիքի միջոցով, վորոնք առայժմ չեն ուղում կոլտնտեսություն մտնել:

Ի՞նչ ընդհանուր բան կարող ե լինել ունտեր Պրիչիբեյկի այդ. «Քաղաքականության» ու կոլտնտեսային քաղաքականության միջև, վորը կոլտնտեսային շինարարության գործում հենվում է կամավորության ու տեղական առանձնահատկությունների հաշվառման վրա: Պարզ ե, վոր դրանց միջև վոչ մի ընդհանուր բան չկա և չի կարող լինել:

Ո՞ւմ են պետք կոլտնտեսային շարժման այդ ծոռւմները, այդ չինովնիկական դեկրետագրումը, այդ անարժան սպանալիքները դյուզացիների նկատմամբ: Վոչ վոքի՛, բացի մեր թշնամիներից:

Ինչի՞ կարող են հանդեցնել դրանք, այդ ծոռւմները: Մեր

թշնամիների ուժեղացմանն ու կոլտնտեսային շարժման կազմակարների պասկալերծմանը:

Պարզ չե՞ արդյոք, վոր այդ ծոռւմների հեղինակները, վորոնք իրենց «ձախ» են յերեակայում, իրականում՝ ջուր են լցնում աչ ուղորտունիզմի ջրաղացին:

2. Մեր կուսակցության քաղաքական սորտեղիայի մեծագույն արժանիքներից մեկն այն ե, վոր յուրաքանչյուր տվյալ մոմենտում նա կարողանում է ընտրել շարժման հիմնական ողակը, վորին կառչելով՝ նա հետո ամբողջ շղթան քաշում և դեպի մի ընդհանուր նպատակ, վորպեսզի վլուխ բերի խնդրի լուծումը: Կարելի՞ յե արդյոք ասել, թե կոլտնտեսային շինարարության սիստեմի մեջ կուսակցությունն արդեն ընտրել ե կոլտնտեսային շարժման հիմնական ողակը: Այս՝ կարելի յե և պետք ե:

Վո՞րն ե դա, այդ հիմնական ողակը:

Գուցե հողը միատեղ վշակելու լեկերությունը: Վո՞չ, այդ չե: Հողը միատեղ մշակելու ընկերությունները, վորտեղ արտադրության միջոցները դեռ հանրայնացված չեն, կոլտնտեսային շարժման արդեն անցած աստիճանն են ներկայացնում:

Գուցե ցյուղատնեսական կոմունան չե: Վո՞չ, կոմունան չե: Կոմունաներն առայժմ դեռ յեղակի յերկույթ են կոլտնտեսային շարժման մեջ: Պայմանները դեռևս չեն հասունացել գյուղատնեսական կոմունաների՝ վորպես գերակշռող ձեւի համար, վորտեղ հանրայնացված ե վո՞չ միայն ամբողջ արտադրությունը, այլև բաշխումը:

Տվյալ մոմենտում կոլտնտեսային շարժման հիմնական ողակը, նրա գերակշռող ձեւը, վորին հարկավոր և այժմ կառչել, ցյուղատնեսական արտելն ե:

Ցյուղատնեսական արտելում, գյուղավորապես հատիկային տնտեսության գծով, հանրայնացված են արտադրության հիմնական միջոցները—աշխատանքը, հողոգագործումը, մեքենաներն ու այլ ինվենտարը, բանող անասունները, տնտեսալարական ընությունները: Նրա մեջ չեն հանրայնացվում տնամերձ հողերը (մանր բանջարանոցները, մանր այգիները), բնակելի շենքերը, կաթնատու անասունների վորոշ մասը, մանր անասունները, ընտանի թռչունները և այլն: Այսելք կոլտնտեսային շարժման հիմնական ողակն ե, վորովհետև նա հատիկային պրոբեմի լուծման ամենից ավելի նպատակահարմար ձեւն ե: Իսկ հատիկային պրոբեմը հիմնական ողակ և հանդիսանում ամբողջ ցյուղատնեսության սիստեմի մեջ, վորովհետև առանց նրա լուծման հնա-

ըավոր չել լուծել վո՛չ (մանր ու խոշոր) կենդանաբուծության պրոբլեմը, վո՛չ տեխնիկական ու հատուկ կուլտուրաների պրոբլեմը, վորոնք հիմնական հումքն են տալիս արդյունաբերության համար: Այս թե ինչու գյուղատնտեսական արտելը տվյալ մոհամառ: Այս թե ինչու գյուղատնտեսական արտելը շարժմենառում հիմնական ողակ ե հանդիսանում կոլտնտեսային շարժման սիստեմում:

Սրանից ե յենում կոլտնտեսությունների «մըինակելի կանոնադրությունը», վորի վերջնական տեքստը հրապարակվում ե այսոր:

Սրանից ել պետք ե յենեն մեր կուսակցական ու խորհրդական աշխատողները, վորոնց պարտականություններից մեկն ել այն ե, վոր ուսումնասիրեն այդ կանոնադրությունն ըստ եյության ու այն մինչեւ վերջը կենսագործեն:

Այս ե կուսակցության գերքավորումը տվյալ մոմենտում:
Կարելի՞ յե արդյոք ասել, թե կուսակցության այս գերքավորումը կենսագործվում ե առանց խախտումների ու աղավազվորումը կենսագործվում ե առանց զայտի այդ չի կարելի ասել: Հայտնի յե, զումեների: Վո՛չ, ցավոք սրտի այդ չի կարելի ասել: Հայտնի յե, վոր ԽՍՀՄ-ի մի շարք շրջաններում, վորտեղ կոլտնտեսությունների գոյության համար մղվող պայքարը գեռ գեռ գեռ գեռ ամրացված չեն, արդի լինելուց, և վորտեղ արտելները գեռ ամրացված չեն, արտելի շրջանակներից դուրս ցատկելու և մեկեն գեպի գյուղատնտեսական կոմունան թոփէք գործելու փորձեր են լինում: Արտելը դեռևս ամրացված չեն, իսկ նրանք արտեն «Հանրայնացնում են» բնակելի շենքերը, մանր անասուններին, ընտանի թշուչումներին, ընդվորում այդ «Հանրայնացնումն» այլասերվում-դառնում ե թղթե-բյուրոկրատական գեկրետագրում, վորովհետեւ զեռմաս չկան այդպիսի հանրայնացնումն անհրաժեշտ դարձնող պայմաններ: Կարելի յե կարծել, թե հատիկային պրոբլեմն լուծված ե կոլտնտեսություններում, թե այն արդեն գերազանցված աստիճան ե, թե տվյալ մոմենտում հիմնական խնդիրը վո՛չ թե հատիկային պրոբլեմի լուծումն ե, այլ իենդանարություններին ու թռչնարուծության պրոբլեմի լուծումը: Հարց ե ծովում. ո՞ւմ ե հարկալոր կոլտնտեսային շարժման տարրեր ձեւը մի տեղ գիղելու այդ քյալագյողական «աշխատանքը»: Ո՞ւմ ե հարկալոր այդ հիմար ու գործի համար վնասակար առաջընկնելը: Կոլտնտեսական-գյուղացնում գրգռել բնակելի շենքելները:

1 «Պրաւա», Զ մարտի 1930 թ.

ընտանի թռչունների «հանրայնացմամբ», յերբ հատիկային պրոբլեմը դեռևս լուծված չե, յերբ կոլտնտեսությունների արտելային ձեւը դեռևս ամրացված չե, միթե պարզ չե՞, վոր այդպիսի «քաղաքականությունը» կարող ե հաճելի ու շահավետ լինել միայն մեր յերգված թշնամիներին: Այդպիսի կայտառ «հանրայնացնողներից» մեկը մինչև անդամ այն տեղն ե հասնում, վոր մրտելին հրաման ե տալիս, վորտեղ նա կարգապրում ե «յերեք որվա ընթացքում հաշվի առնել յուրաքանչյուր տնտեսության բոլոր ընտանի թռչուններին», սահմանել հաշվառման ու հոկտման հատուկ «հրամանատարների» պաշտոն, «արտելում գրավել իշխող բարձունքները», «ղեկավարել սոցիալիստական մարտը՝ առանց պուտերը լքելու», և—պարզ բան ե—ամբողջ արտելը բռան մեջ սեղմել: Ի՞նչ ե սա—կոլտնտեսության ղեկավարման քաղաքականություն, թե՞ նրա քայլայման ու վարկարեկման քաղաքականություն: Ել յես չեմ խսում այն, թող թույլ տրվի ամել, «հեղափոխականների» մասին, վորոնք արտելի կազմակերպման գործն սկսում են յեկեղեցիների զանդերը հանելով: Հանել զանդերը, —ասացե՞ք ինդրեմ՝ ինչպիսի՝ հեղղղափոխականություն (քրե-ボլուոցիոնոստ):

Ի՞նչպես կարող եյին մեր մեջ ծագել «հանրայնացման» գործի քյալագյողական այդ վարժությունները, քյալագյողների իրենց իսկ վրայով թուչելու ծիծաղաշարժ այդ փորձերը, փորձեր, վորոնք նապատակ ունեն զանց առնելու դասակարգերն ու դասակարգային կուիլը, իսկ իրականում ջուր են լցնում մեր դասակարգային թշնամիների ջրաղացին: Դրանք կարող եյին ծագել կոլտնտեսային շննարարության ճակատում ունեցած մեր «ՀԵՅ» ու «անակնիալ» հաջողությունների մինուլորտում միայն: Դրանք կարող եյին ծագել կուսակցության մի մասի շարքերում յեղող քյալագյողական այն տրամադրությունների հետևանքով միայն, թե՝ «Մենք ամեն ինչ կարո՞ղ ենք», «Մեղ համար ամեն ինչ դատա՞րկ բան ե»: Դրանք կարող եյին ծագել միայն այն բանի հետևանքով, վոր մեր ընկերներից վոմանց գլուխը հաջողություններից պատույտ յեկալ, և նրանք մի բոլե զրկվեցին մտքի պայմանառությունից ու հայացքի աչալրջությունից:

Վորպեսպի շտկենք մեր աշխատանքի գիծը կոլտնտեսային շննարարության բնագավառում, պետք ե վերջ դնենք այդ տրամադրություններին:

Այս ե հիմա կուսակցության հերթական խնդիրներից մեկը: Ղեկավարման արվեստը լուրջ բան ե: Շարժումից հետ մնալ

չի կարելի, վորովհետև հետ մնալ—նշանակում ե կարվել մտս-
աաներից։ Բայց առաջ վաղել ել չի կարելի, վորովհետև առաջ
վաղել—նշանակում ե կորցնել կապը մասսաների հետ։ Ով ու-
զում ե զեկավարել շարժումը և դրա հետ մեկտեղ պահպանել
կապերը միլիոնավոր մասսաների հետ, նա պետք ե պայքար մղի
յերկու ձականի վրա—թե՛ հետ մնացողների դեմ, թե՛ առաջ վտ-
գողների դեմ։

Մեր կուսակցությունն այն պատճառով ե ուժեղ ու անպար-
տելի, վոր շարժումը զեկավարելով՝ նա կարողանում ե պահ-
պանել ու բաղմապատկել իր կապերը բանվորների ու դյուդացի-
ների միլիոնավոր մասսաների հետ։

‘Правда’ № 60,
մարտի 1930 թ.։

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

լրագրերից հայտնի յեւ, վոր Ստալինի «Գլխապառույտ՝ հա-
ջողություններից» հոդվածը և կե-ի հայտնի վորոշումը «Կուս-
դիծը կորանտեսային շարժման մեջ ծռելու դեմ պայքարելու մա-
սին» բազմաթիվ արձագանդներ են առաջ բերել կոլտնտեսային
շարժման պրակտիկների շարքերում։ Այդ կապակցությամբ յես
վերջին ժամանակներս ընկեր կոլտնտեսականներից ստացել եմ
մի շարք նամակներ, վորոնց մեջ պահանջ ե արվում պատա-
խանել այդտեղ դրված հարցերին։ Իմ պարտականությունն եր
պատասխանել նամակներին մասնավոր նամակադրության կարգով։
Բայց այդ անհնարին գուրս յեկավ, վորովհետեւ նամակների կե-
սից ալելին ստացվել եր առանց նրանց հեղինակների հարցելի
ժամանակման (մոռացել ելին հասցեներն ուղարկել)։ Մինչդեռ
նամակներում չոշափված հարցերը քաղաքական հսկայական հե-
տաքրքրություն են ներկայացնում մեր բոլոր ընկերների համար։
Բացի դրանից, հասկանալի յեւ, վոր յես չեյի կարող առանց պա-
տասխանի թողնել նաև այն ընկերներին, վորոնք մոռացել ելին
իրենց հասցեներն ուղարկել։ Ուստի յես կանգնած եյի մի ան-
հրաժեշտության առաջ՝ պատասխանել ընկեր կոլտնտեսականնե-
րի նամակներին բացահայտ կերպով, այսինքն մամուլի միջոցով,
նրանց միջից վերցնելով գործի համար հարկավոր բոլոր հար-
ցերը։ Յես ավելի ևս սիրով դիմեցի այդ գործին այն պատճա-
ռով, վոր այդ առթիվ ունեյի կե-ի ուղղակի վորոշումը։

Ա.Ռ.Ա.Տ.Ն ՀԱ.Բ.Ց. Վո՞րն ե դյուղացիական հարցում յեղած
սխալների արմատը։

ՊԱՏԱՍԽԱՆ։ Սխալ մոտեցումը գեղի միջակը։ Միջակի հետ
ունեցած տնտեսական հարաբերությունների բնագավառում
բոնություն թույլ տալը։ Այն բանի մոռացումը, թե տնտեսական
զողումը միջակային մասսաների հետ պետք է կառուցվի վո՛չ թե
բոնի միջոցառումների հիմքի վրա, այլ միջակի հետ համաձայ-
նություն ունենալու հիմքի վրա, միջակի հետ դաշինք ունենալու

հիմքի վրա : Այն բանի մոռացումը , վոր տվյալ մոմենտում կուտանտեսային շարժման հիմք հանդիսանում է բանվոր դասակարգի ու չքավորության դաշինքը միջակի հետ՝ կապիտալիզմի դեմ ընդհանրապես , կուլակության դեմ առանձնապես :

Քանի դեռ հարձակումը կուլակության դեմ կառարվում եր միջակի հետ միասնական ճակատով , ամեն ինչ լավ եր ընթանում : Բայց յերբ մեր միքանի ընկերները , հաջողություններից արբեցած , սկսեցին կուլակի վրա հարձակվելու ուղուց անհկատելիորեն սահել գետի միջակի դեմ պայքարելու ուղին , յերբ նրանք , կոլեկտիվացման բարձր տոկոսի հետևից ընկած՝ սկսեցին միջակի նկատմամբ բռնություն գործ դնել , նրան ընտրական իրավունքից զրկելով , «կուլակաթափ անելով» ու եքսպրոլիտացիայի յենթարկելով նրան , — հարձակումն սկսեց ծովել , միջակի հետ ունեցած միասնական ճակատն սկսեց խարիսխել և , պարզ բան ե , կուլակը հնարավորություն ստացավ նորից վոտքի կանգնելու փորձեր անելու :

Մոռացել են , վոր բռնությունը , վորն անհրաժեշտ ու ողտակար մեր դատակարգային թշնամիների դեմ պայքարելու դրում , անթույլատրելի ու կորստարեր և մեր դաշնակիցը համեմացող միջակի նկատմամբ :

Մոռացել են , վոր հեծելազորային հարձակումները , վորոնք անհրաժեշտ են ու ողտակար ուղմական բռնութիւնի ինդիրներ լուծելու համար , անպետք ու կորստարեր են կոլտնուեսային շնարարության ինդիրները լուծելիս , վորն ընդումին կաղմակերպվում է միջակի հետ դաշնակցած :

Այս և զյուղացիական հարցում յեղած սխալների արմատը : Ահա թե ինչ ե ասում լենին միջակի հետ ունեցած տնտեսական հարաբերությունների մասին .

«Ամենից ավելի մենք պետք ե հիմնենք այն ճշմարտության վրա , վոր այստեղ բռնության մեթոդներով ըստ բանի բռն եյության վոչնչի չի կարելի հասնել : Այստեղ տընտեսական ինդիրը բոլորովին այլ կերպ է դրվում : Այստեղ չկա այն վերնախավը , վոր կարելի յե կտրել , թողնելով ամբողջ հիմքը , ամբողջ շենքը : Այն վերնախավը , վորպիսին քաղաքում կապիտալիստներն եյին , այստեղ չկա : Այստեղ քաղաքում կապիտալիստներն եյին , այստեղ չկա : Այստեղ բռնությամբ գործել՝ նշանակում է կործանել ամբողջ գործը ... Զկա ավելի իմար բան , բան միջակ զյուղացու տընտեսական հարաբերությունների բնագավառում բռնություն կիրառելու միտքն իսկ» (Հ . XXIV , եջ 168) :

Այնուհետեւ .

«Միջակ զյուղացիության նկատմամբ բռնություն գործադրելը մեծագույն վնաս է : Դա մի բազմաթիվ , բազմամիւրն խավ է : Մինչև անդամ Յելլոպայում , վորտեղ նա վոչ մի տեղ այդպիսի ուժի չի հասնում , վորտեղ վիթխարիություն զարգցած ե տեխնիկան ու կուտուրան , քաղաքային կյանքը , յերկաթուղիները , վորտեղ ամենից ավելի հեշտ կլիներ դրա մասին մտածել , — վո՞չ վոք , ամենահեղափոխական սոցիալիստներից վո՞չ մեկը , յերբեք բռնի միջոցառումներ չի առաջարկել միջակ դյուղացիութան նկատմամբ» (Հ . XXIV , եջ 167) :

Թվում ե , թե պարզ է :

ՅԵՐԿՈՌՈՐԴ ՀԱՐՑ : Վորո՞նք են կոլտնտեսային շարժման մեջ յեղած գլխավոր սխալները :

ՊԱՏԱԽԱՅԱՆ : Դրանք , այդ սխալները , առնվազն յերեքն են :

1) Խախտել են կամավորության լենինյան սկզբունքը կուտանտեսությունները կառուցելիս : Խախտել են կուսակցության հիմնական ցուցումները և գյուղատնտեսական արտելի որինակեցի կանոնագրությունը կոլտնտեսային շինարարության կամավորության մասին :

Լենինիզմն ուսուցանում է , վոր զյուղացիներին հարկավոր է կոլեկտիվ տնտեսության ունակութիւն վրա փոխադրել կամավորության կարգով , մենատնտեսության հանդեպ հասարակական , կոլեկտիվ տնտեսության ունեցած առավելությունների մեջ համոզելու ճանապարհով : Լենինիզմն ուսուցանում է , վոր կոլեկտիվ տնտեսության առավելությունների մեջ զյուղացիներին կարելի յե համոզել միայն այն գեպքում , յեթե ցույց տրվի նրանց ու ապացուցվի գործով , վորդով , վոր կոլտնտեսությունը մենատնտեսությունից լավ է , վոր նա մենատնտեսությունից շահավետ է , վոր կոլտնտեսությունը յելք ե տալիս զյուղացուն , չքավորին ու միջակին , կարիքից ու աղքատությունից : Լենինիզմն ուսուցանում է , վոր այս պայմաններից դուրս՝ կուտանտեսությունները չեն կարող հաստատուն լինել : Լենինիզմն ուսուցանում է , վոր կոլտնտեսային տնտեսությունը մարդկանց վկին ուժով փաթաթելու ամեն մի փորձ , հարկադրման կարգով կոլտնտեսություններ արմատավորելու ամեն մի փորձ կարող ե տալ միայն բացասական հետևանքներ , կարող ե զյուղացիներին միջակ հետ վանել կոլտնտեսային շարժումից :

ՅԵՎ ԽԱԿԱՊԵՏ , քանի գեռ այս հիմնական կանոնը պահպան-

վում եր, կոլտնտեսային շարժումը հաջողություն եր ունենում հաջողության հետեւից: Բայց մեր միքանի ընկերները, հաջողություններից արբեցած, սկսեցին արհամարհել այս կանոնը, սկսեցին ցուցաբերել ծայրահեղ շտապողականություն և, կոլեկտիվացման բարձր տոկոսների հետեւ ընկած՝ սկսեցին հարկադրական կարգով կոլտնտեսություններ արմատավորել: Զարժանալի չե, վոր այդպիսի «քաղաքականության» բացասական հետեւանքները յերկար սպասել չովին իրենց: Հապճեպորեն ծագած կոլտնտեսություններն սկսեցին նույնպես արագ հալվել, ինչպես վոր արագ ծագել ելին, իսկ գյուղացիության այն մասը, վոր գեռ յերեկ ահազին վատահությամբ եր վերաբերվում կոլտնտեսություններին, սկսեց յերես գարձնել նրանցից:

Այս ե առաջին ու գլխավոր սխալը կոլտնտեսային շարժման մեջ:

Ահա թե ինչ ե ասում Լենինը կոլտնտեսային շինարարության կամավորության մասին.

«Այժմ մեր խնդիրն ե՝ անցնել հողի հանրային մշակմանը, անցնել ընդհանուր խոչը տնտեսությանը: Բայց Խորհրդային իշխանության կողմէց վոչ մի հարկադրանք չի կարող լինել. վոչ մի որենք չի հարկադրում այդ անելու: Գյուղատնտեսական կոմունան կամավոր կերպով և հիմնվում, հողի հանրային մշակման անցնելը կարող ե լինել միայն կամավոր, այս տեսակետից բանվորա-գյուղացիական կառավարության կողմէց մերժության համար ամենալուր հարկադրանք իսկ չի կարող լինել ու որենքով չի թույլատրվում: Յեթե ձեզանից մեկնումնեն այլպիսի հարկադրանքներ նկատի, ապա դուք պետք ե իմանաք, վոր դա չարարկում ե, վոր դա որենքի խախուս ե, վորը մենք բոլոր ուժով ջանում ենք ուղղել և կուղղենք»¹ (Հ. XXIV, Եջ 43):

Այսուհետեւ.

«Միայն այն դեպքում, յեթե հաջողվի գյուղացիներին զործով ցույց տալ հողի հանրային, կոլեկտիվ, ընկերային, արտելային մշակման առավելությունները, յեթե միայն հաջողվի ողնել գյուղացուն ընկերային, արտելային տնտեսության միջոցով, միայն այն ժամանակ պետական իշխանությունն իր ձեռքում պահող բանվոր դասակարգն իրոք կապացուցի գյուղացուն իր իրավացիությունը, իրոք հաստա-

¹ Ընդդեռումն իմն ե: Ի. Ստ.:

տուն կերպով ու խոկապիս իր կողմը կդրավի բաղմամիլիոն գյուղացիական մասսան: Այս պատճառով ընկերային, արտելային հողագործությունն աջակցություն ցույց տվող ամեն տեսակի ձեռնարկումների նշանակությունը չե կարելի չափաղանցանել: Մենք ունենք գյուղերի խուզ վայրերում ցրված, ցիրուցան միլիոնավոր առանձին տնտեսություններ... Միայն յերբ գործնականորեն, փորձով, վոր մոտ ե գյուղացիներին, ապացուցի, թե անցումը դեպի ընկերային, արտելային հողագործությունն անհրաժեշտ ե ու հնարավոր, միայն այն ժամանակ մենք իրավունք կունենանք ասելու, վոր այնպիսի հսկայական գյուղացիական յերկրում, ինչպիսին Ռուսաստանն ե, սոցիալիստական հողագործության ուղիղիով լուրջ քայլ և արված»¹ (Հ. XXIV, Եջ 579—580): Վերջապես, գարձյալ մի տեղ Լենինի աշխատություններից.

«Խրախոսելով միջակ գյուղացիների ամեն տեսակի լնկերությունները, ինչպես նաև գյուղատնտեսական կոմունաները, Խորհրդային իշխանության ներկայացուցիչները վոչ մի ամենափոքր հարկադրանք չափանիք չի կայութելի իշխանության առաջնորդություններն են արթեքավոր, վորոնք հենց իրենք գյուղացիներն են իրագործել իրենց աղատ նախաձեռնությամբ և վորոնց ոգուտներն ստուգել են նրանք պրակտիկայում: Ծայրահեղ շտապողականությունն այս գործում վնասակար ե, վորովհետեւ ընդունակ և լոկ ուժեղացնելու միջակ գյուղացիության նախապաշարմունքները նորմուծությունների հանդեպ: Խորհրդային իշխանության այն ներկայացուցիչները, վորոնք իրենց թույլ են տալիս դորձադրելու վոչ միայն ուղղակի, այլև թեկուզ հենց անուղղակի հարկադրանք գյուղացիներին կոմունաներին միացնելու նպատակով, պետք ե յենթարկվեն խստագույն պատասխանառվության ու հեռացվեն գյուղի աշխատանքից»¹ (Հ. XXIV, Եջ 174): Թվում ե, թե որպես ե:

Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր կուսակցությունը Լենինի այս ցուցումները կերպառի ամենայն խստությամբ:

2) Խախտել են ԽՍՀՄ-ի տարեկ շրջանների պայմանաների բաղմապանության հաշվառման լենինյան սկզբունքը կոլտնտեսային շինարարության վերաբերմամբ: Մոռացել են, վոր ԽՍՀՄ-ում

¹ Ընդդեռումն իմն ե: Ի. Ստ.:

կան ամենաբազմապիսի մարդեր, վորոնք ունեն տարբեք տնտեսական կացութաձև ու կուլտուրայի մակարդակ: Մոռացել են, վոր այդ մարզերի մեջ կան առաջավոր, միջակ ու հետամիաց մարդեր: Մոռացել են, վոր կոլտնտեսային շարժման տեմպերն ու կոլտնտեսային շինարարության մեթոդները չեն կարող միանման լինել այդ մարզերի համար, վորոնք բնավ միանման չեն:

«Սիալ կլիներ, —ասում ե Լենինը, —յեթե մենք պարզապես շարլոնով դեկրետներ արտադրեյինք Ռուսաստանի բոլոր վայրերի համար, յեթե բոլեկիկ-կոմունիստները, խորհրդային աշխատողներն Ուկրաինայում և Դոնի ափերին պատճենագույն առանց իստրության, հախուռն կերպով (օգյու) դժանք տարածել այլ մարզերի վրա»... վորովհետեւ «մենք վոչ մի դեպքում մեզ չենք կաշկանդում միորինակ շարլոնով, մեկ անդամ ընդմիշտ չենք վճռում, վոր մեր փորձը, Կենտրոնական Ռուսաստանի փորձը, կարելի յե ամբողջությամբ փոխադրել բոլոր ծայրամասերը» (Հ. XXIV, Էջ 125—126):

Լենինն ասում ե այսուհետեւ, վոր

«Կենտրոնական Ռուսաստանը, Ուկրաինան, Սիբիրը շարլոնացնելը, վորոշ շարլոնի յենթարկելը մեծագույն հիմարություն կլինի» (Հ. XXVI, Էջ 243):

Վերջապես, Լենինը պարտավորեցնում է Կովկասի կոմունիստներին, վորպեսզի նրանք

«Հասկանան իրենց դրության, իրենց հանրապետությունների դրության յուրոքինակությունը, ի տարբերությամբ ՌՍՖԻՀ դրությունից ու պայմաններից, հասկանան անհրաժեշտությունն այն բանի, վոր վո՞չ քե պետք ե պատմենի մեր տակտիկան, այլ մտածված կերպով ձևափոխել այն կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան» (Հ. XXVI, Էջ 191):

Թվում ե, թե պարզ ե:

Լենինի այս ցուցումների հիման վրա՝ մեր կուսակցության կենտրոնը «Կոլեկտիվացման տեմպի մասին» (տես 1930 թ. Հունվարի 6-ի «Պրագա»-ն) իր վորոշման մեջ ԽՍՀՄ-ի մարզերը, կոլեկտիվացման տեմպերի տեսակետից, բաժանեց յերեք խմբի, վորոնցից Հյուսիսային Կովկասը, Միջին Վոլգան, ու Ստորին Վոլգան կարող են կոլեկտիվացումը հիմնականում ավարտել 1931 թ. գարնանը, մյուս հատիկային մարզերը (Ուկրաինա, Կենտրոնական Սևահող մարզ, Սիբիր, Ուրալ, Կաղականան

այլն) կարող են այն հիմնականում ավարտել 1932 թ. գարնանը, իսկ մնացած մարզերը կարող են կոլեկտիվացումը յերկարագում մինչև հնդամյակի վերջը, այսինքն մինչև 1933 թվունը:

Թվում ե, թե հասկանալի յե:

Իսկ ի՞նչ ստացվեց իրականում: Բանից գուրս յեկալ, վորմեր ընկերներից վորանք, կոլտնտեսային շարժման առաջին հողություններից արբեցած, փառավորապես մոռացան թե՛ Լենինի ցուցումները, թե՛ Կենտրոնը վորոշումը: Մոռկվայի մարզը, տենտորեն ընկած կոլեկտիվացման փեռուն թվերի հետեւց, սկսեց իր աշխատողներին կողմնորոշել դեպի կոլեկտիվացման ավարտումը 1930 թ. գարնանը, թեև նա իր տրամադրության տակ ուներ վոչ պակաս քան յերեք տարի (1932 թ. վերջը): Կենտրոնական Սևահող մարզը, չցանկանալով «մյուսներից հետ մնալ», սկսեց իր աշխատողներին կողմնորոշել դեպի կոլեկտիվացման ավարտումը 1930 թ. առաջին կեսին, թեև նա իր տրամադրության տակ ուներ վոչ պակաս քան յերկու տարի (1931 թ. վերջը): Իսկ անդրկովկասցիներն ու թուրքեստանցիները, առաջավոր շրջաններին «հասնելու և անցնելու» իրենց բուռն ձգտումով տարված, սկսեցին կողմնորոշվել դեպի կոլեկտիվացման ավարտումն «ամենակարճ ժամանակամիջոցում», թեև նրանք իրենց տրամադրության տակ ունեյին ամբողջ չորս տարի (1933 թ. վերջը): Հասկանալի յե, վոր կոլեկտիվացման արդարի համար «տեմպ» կիրառելիս կոլտնտեսային շարժման համար նվազ պատրաստված շրջանները, յեռանդադին ձգտելով «անցնել» ավելի պատրաստված շրջաններից, հարկադրված յեղան ուժեղացրած վարչական ճնշում գործ դնելու, փորձելով կոլտնտեսային շարժման արագ տեմպի համար պակասող գործոնների թերին լրացնել իրենց սեփական վարչական բուռն յեռանդով: Արդյունքները հայտնի յեն: Բոլորին հայտնի յե այն խառնաշփոթությունը, վոր ստացվեց այդ մարզերում և վորը հետո հարկ յեղալ վերացնելու կենտրոնի միջամտության կարգով:

Այս ե յերկրորդ սիալը կոլտնտեսային շարժման մեջ:

3) Խախտել են լենինյան սկզբունքը, ըստ վորի կոլտնտեսային շինարարության նկատմամբ անթույլատրելի յե թոփչք գործել շարժման չափարարված ձևի վրայով: Խախտել են լենինյան սեղմունքը—մասսաների դարդացումից առաջ չանցնել, մասսաների շարժումը չղեկրետագրել, մասսաներից չկտրվել, այլ շարժվել մասսաների հետ միասին և նրանց առաջ շարժել, նրանց մոտեցնելով մեր լողունդներին և հեշտացնելով նրանց համար՝

իրենց սեփական փորձով համոզվելու մեր լողունգների ճշտության մեջ:

«Յերբ Պետրոգրադի պրոլետարիատն ու Պետրոգրադի Կայազորի զինվորները վերցնում եին իշխանությունը, —առում ե Լենինը, —նրանք հիմնալի կերպով գիտելին, վոր գյուղում շինարարություն կատարելու դործում մեծ դժվարություններ են հանդիսավոր, վոր այստեղ հարկավոր և ավելի աստիճանաբար առաջ դնալ, վոր այստեղ դեկլիրավ, որենիներով հոդի հանրային մշակում փորձելը մեծագույն անհերերություն կլիներ, վոր այս բանին կարող են համաձայնել չին թիվ կազմող գիտակիցները, իսկ գյուղացիների հսկայական մեծամասնությունն այս խնդիրը չեր դնում: Յեկայ պատճառով մենք սահմանափակվում ենինք նրանով, ինչ բացարձակապես անհրաժեշտ է հեղափոխության զարգացման շահերի տեսակետից. վոչ մի գեպքում մասսաների գարգացումից առաջ չանցնել, այլ սպասել, մինչև վոր այդ մասսաների սեփական փորձից, նրանց սեփական պայքարից ամի առաջընթաց շարժումը»¹ (Հ. XXIII, Էջ 252):

Յելենվակ Լենինի այս ցուցումներից՝ կենակոմը «կոլեկտիվացման տեմպի մասին» (տե՛ս 1930 թվի հունվարի 6-ի «Պրաեւա»-ն) իր հայտնի վորոշման մեջ ընդունեց, վոր ա) տվյալ մոմենտին կոլտնտեսային շարժման գլխավոր ձեւ հանդիսանում ե գյուղատնտեսական արտելը, վոր բ) այս պատճառով անհրաժեշտ է մշակել գյուղատնտեսական արտել՝ վորպես կոլտնտեսային շարժման գլխավոր ձեւ՝ որինակելի կանոնագրությունը, վոր գ) մեր գործնական աշխատանքում չի կարելի թուլատրել կոլտնտեսական շարժման «դեկրետագրումը» վերից ու «կոլեկտիվացում խաղալը»:

Այս նշանակում ե, վոր այժմ մենք պետք ե կուրս վերցնենք վո՛չ թե դեպի կոմունան, այլ գեպի գյուղատնտեսական արտելը, վորպես կոլտնտեսային շինարարության գլխավոր ձեւ, վոր չի կարելի թուլատրել գյուղատնտեսական արտելի վրայով դեպի կոմունա ցատկելը, վոր չի կարելի գյուղացիների մասսայական շարժումը գեպի կոլտնտեսությունները նենդափոխել կոլտնտեսությունների «դեկրետագրումը», «կոլտնտեսություն խաղալը»:

Թվում ե, թե պարզ ե:

¹ Էնդգծումն իմն ե: Ի. Ստ.:

Իսկ ի՞նչ ստացվեց իրականում: Բանից դուրս յեկավ, վեր միքանի ընկերները, կոլտնտեսային շարժման առաջին համոզություններից արբեցած, փառավորապես մոռացան թե՛ Լենինի ցուցումները, թե՛ կենտկոմի վորոշումը: Փոխանակ դյուզատրնտեսական արտելի համար մասսայական շարժում կազմակերպելու՝ այդ ընկերներն սկսեցին մենատնտես գյուղացիներին ուղղակի «փոխալրել» կոմունայի կանոնագրությանը: Շարժման արտելային ձևն ամրապնդելու փոխարեն՝ սկսեցին հարկագրական կարգով «հանրայնացնել» մանր անսպունները, թռչունները, վոչ-ապրանքային կաթնատու անսպունները, բնակելի շենքերը: Լենինիստի համար անթույլատրելի այս շտապողականության հետեւանքներն այժմ հայտնի յեն բոլորին: Կայուն կոմունաներ, իբրև կանոն, իհարկե, չստեղծեցին: Բայց գրա փոխարեն ձեռքից բաց թողին մի շարք գյուղատնտեսական արտելներ: Ճիշտ ե, մնացին «լավ» բանաձևեր: Սակայն ի՞նչ ոգում դրանցից:

Այս ե յերրորդ սխալը կոլտնտեսային շարժման մեջ:

ՅԵՐՐՈՐԴ ՀԱՐՑ: Ի՞նչպես կարող ելին ծագել այդ սխալները և կուսակցությունն ի՞նչպես պետք ե ուղղի դրանք:

ՊԱՏԱՍԽԱՆ: Նրանք ծագեցին կոլտնտեսային շարժման բնագավառում մեր ունեցած արագ հաջողությունների հիման վրա: Հաջողությունները յերբեմն դլուխ են պատեցնում: Նրանք հաճախ ծնում են ծայրահեղ ինքնահավանություն ու մեծամտություն: Այդ առանձնապես հետ կարող ե պատահել իշխանության գլուխ կանոնած կուսակցության ներկայացուցիչներին: Մանամունդ այնպիսի կուսակցության, ինչպիսին մեր կուսակցությունն ե, վորի ուժն ու հեղինակությունը համարյա անչափելի յեն: Այսուեղ միանդամայն հնարավոր են կոմունապարծության փաստերը, վորի գեմ կատաղի պայքար եր մղում լենինը: Այսուեղ միանդամայն հնարավոր ե համատը գեպի դեկրետի, բանաձևերի, կարգադրության մենակարողությունը: Այսուեղ միանդամայն ուել ե այն վտանգը, վոր կուսակցության հեղափոխական միջոցառումները մեր անծայրածիր յերկրի այս կամ այն անկյուններում վերածվեն կուսակցության առանձին ներկայացուցիչների գատարկ, չինովնիկական գեկրետադրման: Յես նկատի ունեմ վո՛չ միայն տեղական աշխատողներին, այլև մարզային առանձին գործիչների, այլև կենտկոմի առանձին անդամների: «կոմունիստական մասարձությունը, —առում ե Լենինը, —եշտանկում ե այն, վոր մարդ, գտնվելով կոմունիստական կուսակցության մեջ և այնտեղից գեռնելով, յերկարայում

թե իր բոլոր ինդիբները նա կարող ե վճռել կոմունիստական գոկրետագրումով» (Հ. XXVII, էջ 50—51):

Ահա թե ինչ հողի վրա ծագեցին սխալները կոլտնտեսային շարժման մեջ, կուսակցական զծի ծոռամները կոլտնտեսային շինարարության դորժում:

Վո՞րն ե այդ սխալների ու ծոռամների վտանդը, յեթե նրանք այսուհետեւ ել շարունակվեն, յեթե նրանք չվերացվեն արագորեն ու առանց մնացորդի:

Վտանդն այստեղ այն ե, վոր դրանք, այդ սխալները, մեղուղի հաղորդակցությամբ տանում են դեպի կոլտնտեսային շարժման պսակաղերծում, դեպի դժուռություն միջակի հետ, դեպի չքավորության կազմալուծում, դեպի մեր չարքերի իրարանցում, դեպի մեր ամբողջ սոցիալիստական շինարարության թուլացում, դեպի կուլակության վերականդնում: Կարճ ասած՝ այդ սխալները տեղենց ունեն զուրս զցելու մեղ զյուղացիության հիմնական մասսաների հետ զաշինքն ամրացնելու ճանապարհոց, պրոլետարական դիկտատորայի ամրացման ճանապարհոց դեպի այդ մասսաներից խղիլու ճանապարհը, պրոլետարական դիկտատորայի խարիսխան ճանապարհը:

Այդ վտանդն ուրվագլծվեց արդեն փետրվարի յերկրորդ կեսին, հենց այն մոմենտին, յերբ մեր ընկերների մի մասը, նախորդ հաջողություններից կուրացած, քառատրոփ սլանում եր լենինյան ճանապարհոց դուրս: Կուսակցության կենտկոմը հաշվի առավ այդ վտանդը և չափաղեց դործին միջամտել՝ հանձնարարելով Ստալինին, վոր կոլտնտեսային շարժման վերաբերյալ մի հատուկ հոգվածով նախազգուշացում անի չափ ու սահմանը կորցրած ընկերներին: Վոմանք կարծում են, թե «Գլխավորույթ՝ հաջողություններից» հոգվածն Ստալինի անձնական նախաձեռնության արդյունք ե: Այդ, իհարկե, դատարկ բան է: Կենտկոմը մեղանում գոյություն ունի վոչ նրա համար, վոր մի այդպիսի դործում վորեւ մեկի նախաձեռնությունը թույլատրի: Դա կենտկոմի խոր հետախուզությունն եր: Յեվ յերբ պարզեցին սխալների խորությունն ու չափերը, կենտկոմը չափաղեց իր հեղինակության ամբողջ ուժով հարվածելու սխալները, հրապարակելով 1930 թվի մարտի 15-ի իր նշանավոր վորոշումը:

Դժվար ե կատաղի վաղքի ժամանակ կանոնեցնել ու դեպի ուղիղ ճանապարհ դարձնել մարդկանց, վորոնք գլխավորույթ արագությամբ դեպի անդունդն են սլանում: Բայց մեր կենտկոմը հենց նրա համար ել կոչում ե լենինյան կուսակցության

կենտրոնական կոմիտե, վոր նա միայն այդպիսի դժվարություններ չե, վոր կարողանում ե հաղթահարել: Յեվ նա հիմնականում արդեն հաղթահարել ե այդ դժվարությունները:

Կուսակցության ամբողջ ջոկատների համար այդպիսի զեպքերում դժվար ե կանոնեցնել իրենց վաղքը, ժամանակին զառնալ գեղի ուղիղ ճանապարհ ու ընթացքի պահին վերակառուցել իրենց շարքերը: Բայց մեր կուսակցությունը հենց նրա համար ել կոչում ե լենինի կուսակցություն, վոր նա բավականաչափ ճկունություն ունի այդպիսի դժվարությունները հաղթահարելու համար: Յեվ նա հիմնականում արդեն հաղթահարել ե այդ դժվարությունները:

Այստեղ զվարավոր գործն այն ե, վորպեսզի մարդ իր սխալներն ընդունելու արիություն դրսերի և ամենակարճ ժամանակամիջոցում դրանք լիկվիդացիայի յենթարկելու ուժեր գտնի իր մեջ: Մոտ անցյալի հաջողություններով արբենալուց հետո իր սխալներն ընդունելու վախը, ինքնաքննադատության վախը, սխալներն արագ ու վճռաբար ուղղել չցանկանալը, —այս ե գըլխավոր դժվարությունը: Բավական ե, վոր հաղթահարենք այս դժվարությունը, բավական ե, վոր դեն զցենք թվական փրունաաւագանքը, բավական ե, վոր պահպան միանալու մասիցը, բավական ե, վոր պահպան միանալու մասիցը: Այս մեջ հիմք չկա կասկածելու, վոր կուսակցությունն արդեն հիմնականում հաղթահարել ե այդ վտանդավոր դժվարությունը:

«Բոլոր հեղափոխական կուսակցությունները, —ասում ե լենինը, —վորոնք մինչեւ այժմ կործանվել են, —կործանվել են նրանց, վոր մեծամեծ ու չեն կարողացել տեսնել, թե ինչի մեջ ե իրենց ուժը, և վախեցել են խոսել իրենց քուլությունների մասին: Իսկ մենք չենք կործանվի, վորովհետեւ չենք վախենում մեր թուլությունների մասին խոսելուց և կոուլորենք հաղթահարել թուլությունը»¹ (Հ. XXVII, էջ 260—261):

Լենինի այս խոսքերը չեն կարելի մոռանալ:

ԶՈՐՅՈՒԹՅ ՀԱՐՑ: Կուսակցի ծոռամների դեմ մղվող պայքարը դեպի հետ կատարելող ընթացք, նահանջ չի արդյոք:

¹⁾ Ընդգծում իմ եւ Խ. Առ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՅԻՆ: իհարկե, վո՞չ: Նահանջի մասին այստեղ կարող չն խոսել միայն այն մարդիկ, վորոնք սխալների ու ծոռւմների շարունակումը հարձակում են համարում, իսկ սխալների գեմ պայքարելը—նահանջ: Սխալներ ու ծոռւմներ կիտելու կարգով հարձակում, —ինչ ասել կուզի, լա՛վ «հարձակում ե»:

Մենք առաջադրեցինք գյուղատնտեսական արտելը վորպես կոլտնտեսային շարժման հիմնական ձև տվյալ մոմենտին, տալով համապատասխան որինակելի կանոնադրություն, վորպես կողանուեսային շինարարության վերաբերյալ աշխատանքի ղեկավարություն: Նահանջում ենք արդյոք մենք այս դործից: իհարկե, վո՞չ:

Մենք առաջադրեցինք՝ բանվոր դասակարգի ու չքայլության արտադրական զողման ամրացումը միջակի հետ վորպես կոլտնտեսային շարժման հիմք տվյալ մոմենտին: Նահանջում ենք արդյոք մենք այդ դործից: իհարկե, վո՞չ:

Կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու լողունզը մենք առաջադրեցինք վորպես գյուղում կատարվող մեր գործնական աշխատանքի դիմուլոր լողունդ տվյալ մոմենտին: Նահանջում ենք արդյոք մենք այդ դործից: իհարկե, վո՞չ:

Մենք գեռես 1930 թվի հունվարին վերցրինք ԽՍՀՄ-ի դյուդատնտեսության կոլեկտիվացման վորոշ տեմպ՝ ԽՍՀՄ-ի մարդերը բաժանելով վորոշ խմբերի ու յուրաքանչյուր խմբի համար իր հատուկ տեմպը վորոշելով: Նահանջում ենք արդյոք մենք այդ դործից: իհարկե, վո՞չ:

Ել վո՞րտեղ ե այստեղ կուսակցության «նահանջը»:

Մենք ուզում ենք, վոր սխալներ ու ծոռւմներ թույլ տված մարդիկ նահանջեն իրենց սխալներից: Մենք ուզում ենք, վոր քյալագյողներն իրենց քյալագյողությունից նահանջեն դեպի լենինիդմի դիրքերը: Մենք այդ ուզում ենք, վորովհետեւ միայն այդ պայմանով կարելի կլինի շարունակել իսկական հարձակումը մեր դասակարգային թշնամիների գեմ: Նշանակում ե այս արդյոք, վոր սրանով մենք ընթացք ենք կատարում դեպի հետ: իհարկե, վո՞չ: Սա միայն այն ե նշանակում, վոր մենք ուզում ենք կանոնավոր հարձակում դործել և վոչ թե հարձակման քյալագյողական խաղ անել:

Մի՞թե պարզ չէ, վոր միայն տարորինակ մարդիկ ու «ձախ» խոտորիչները կարող են կուսակցության այսպիսի դիրքավորումը վորպես նահանջ գնահատել:

Նահանջի մասին շաղակրատող մարդիկ չեն հասկանում առնվազն յերկու բան:

1) Նրանք հարձակման որենքները չգիտեն: Նրանք չեն հասկանում, վոր առանց նվաճած դիրքերի ամրացման՝ հարձակումը մի հարձակում ե, վոր դատապարտված և տապալվման: Յե՞րբ կարող ե հարձակումը հաջող լինել, ասենք, ուսղմական դործի բնադավառում: Յերբ մարդիկ չեն սահմանափակվում հախուռն առաջնաղացումով, այլ ջանում են դրա հետ միասին ամրացնել գրալած դիրքերը, վերախմբավորել իրենց ուժերը փոխված իրադրությանը համապատասխան, ամրացնել թիկոնքները, մոտ բերել ուղերվները: Այս բոլորն ինչի՞ համար ե հարկավոր: Նրահամար, վոր մեղ ապահովենք անակնկալներից, վերացնենք առանձին ճեղքվածքները, վորոնցից ապահովված չե վոչ մի հարձակում, և այդպիսով նախապատրաստենք թշնամու լիակատար լիկվիդացիան: Լեհական զորքերի սխալը 1920 թվին, յեթե վերցնենք դործի միայն ուզմական կողմը, այն ե, վոր նրանք արհամարհեցին այս կանոնը: Սրանով ե, ի միջի այլոց, բացառըլում, վոր հախուռն կերպով մինչև կիեվ սլանալով՝ նրանք ստիպված ելին հետո նույնպես հախուռն կերպով հետ սլանալ մինչև Վարչավալ: Խորհրդային զորքերի սխալը 1920 թվին, յեթե վերցնենք դարձյալ դործի միայն ուզմական կողմը, այն ե, վոր նրանք Վարչավալյի վրա իրենց դործած հարձակման ժամանակ կրկնեցին լեհերի սխալը:

Նույնը հարկավոր ե ասել դասակարգային կոմի ճակատում հարձակվելու որենքների մասին: Զի կարելի հաջող հարձակում դործել գասակարգային թշնամիներին լիկվիդացիայի յենթարկելու նպատակով՝ առանց ամրացնելու նվաճած դիրքերը, առանց վերախմբավորելու իր ուժերը, առանց ուղերվներով ապահովելու ճակատը, առանց ամրացնելու թիկոնքները և այն:

Ամբողջ բանն այն ե, վոր քյալագյողները չեն հասկանում հարձակման որենքները: Ամբողջ բանն այն ե, վոր կուսակցությունը դրանք հասկանում ե ու կիրառում ե կյանքում:

2) Նրանք չեն հասկանում հարձակման դասակարգային ընույթը: Բզավում են հարձակման մասին: Բայց հարձակում վո՞ր դասակարգի վրա, վո՞ր դասակարգի հետ դաշնակցած: Մենք հարձակում ենք դործում դյուղի կապիտալիստական տարրերի վրա՝ միջակի հետ դաշնակցած, վորովհետեւ միայն այդպիսի հարձակումը կարող ե մեղ հաղթություն տալ: Բայց ի՞նչպես

վարդենք, յեթե կուսակցության առանձին ջոկատների բուռն վո-
գեռորդիթյան պահին հարձակումն սկսում է զուրս ընկնել ճիշտ
ճանապարհից և իր սուր ծայրով շուռ ե գալիս մեր գաշնակցի
դեմ, միջակի դեմ: Միթե մեղ հարկավոր ե ամեն մի հարձա-
կում և վոչ թե հարձակում վորոշ դասակարգի վրա, վորոշ դա-
սակարգի հետ դաշնակցած: Զե՞ վոր Դոն-Քիշուուլ նույնակես յե-
րեակայում եր, թե ինքը հարձակում է թշնամիների վրա, յեր
դըուի յեր զնում հողմաղացի դեմ: Սակայն հայտնի յե, վոր
այդ, թող թույլ տրվի ասել, հարձակումով նա իր ճակատը ջար-
դեց:

Յերևի Դոն-Քիշուի դափնիները քեզ չեն թողնում մեր
«ձախ» խոտորիչներին:

Հինգերութիւն: Վո՞րն ե մեզանում գլխավոր վտանգը—
աջը, թե «ձախը»:

ՊԱՏԱՍԽԱՆ: Գլխավոր վտանգը մեզանում աջն ե: Մեզա-
նում աջ վտանգը յեղել ե և մնում ե գլխավոր վտանգը:

Այս դրույթը չի հակասում արդյոք Կենտրոմի 1930 թ.
մարտի 15-ի վորոշման մեջ յեղած հայտնի թեղիսին այն մասին,
վոր «ձախ» խոտորիչների սխալներն ու ծոռւմներն այժմ կոլ-
տնտեսային շարժման գլխավոր արգելակն են: Վո՞չ, չի հակա-
սում: Բանն այն ե, վոր «ձախ» խոտորիչների սխալները կոլ-
տնտեսային շարժման բնադավառում այնպիսի սխալներ են, վո-
րոնք նախատավոր իրավրություն են ստեղծում կուսակցության
մեջ աջ թեքման ուժեղացման ու ամրացման համար: Ինչո՞ւ:
Այն պատճառով, վոր այդ սխալները կուսակցության գիծը սխալ
լուսով են պատկերում, —ասել ե թե՝ նրանք հեշտացնում են կու-
սակցության վարկարեկման դործը, —հետևաբար, նրանք հեշտաց-
նում են աջ տարրերի պայքարը կուսակցության դեկավրության
դեմ: Կուսակցական դեկավրության վարկարեկումը հենց այն
տարրական հողն ե, վորի բազայի վրա յե միայն, վոր կարող ե
տեղի ունենալ աջ ուկլոնիստների պայքարը կուսակցության դեմ:
Այս հողն աջ ուկլոնիստներին տալիս են «ձախ» խոտորիչները,
նրանց սխալներն ու ծոռւմները: Այս պատճառով աջ ոպորտու-
նիզմի դեմ հաջողությամբ կավելու համար հարկավոր ե հաղթա-
հարել «ձախ» ոպորտունիստների սխալները: «Ձախ» խոտորիչներն
աջ ուկլոնիստների գաշնակիցներն են որյեկտիվորեն:

Այս ե «ձախ» ոպորտունիզմի և աջ ուկլոնիզմի միջև յեղած
յուրորինակ կապը:

Այս կապով ել հարկավոր ե բացատրել այն փաստը, վոր
միքանի «ձախներ» հաճախակի խոսք են բաց անում աջերի հետ
ըլուկ ունենալու մասին: Սրանով ել հարկավոր ե բացատրել այն
յուրորինակ յերեւյթը, վոր «ձախների» մի մասը, վորը դեռ-
ևս յերեկ ուռա-հարձակում եր «կատարում» և փորձում եր
ընդամենը մի յերկու-յերեք շաբաթվա ընթացքում կոլեկտիվաց-
նել իւշչի-ն, այսոր պասսիվության մեջ ե ընկնում, ձեռքերը
կախ ե դյում ու պայքարի դաշտը փառավորապես զիջում ե աջ
ուկլոնիստներին՝ այդպիսով կուլակության հանդեպ իսկական
(առանց չակերտների) նահանջի գիծ վարելով:

Ընթացիկ մոմենտի առանձնահատկությունն այն է, վոր
«ձախ» խոտորիչների սխալների դեմ մղած պայքարը մեզանում
հանդիսանում ե աջ ոպորտունիզմի դեմ հաջող պայքար մղելու
պայմանն ու յուրորինակ ձեւը:

Վեցերութիւն: Ի՞նչպես գնահատենք դյուզացիների մի
մասի տեղատվությունը կոլտնտեսություններից:

ՊԱՏԱՍԽԱՆ: Գյուղացիների մի մասի տեղատվությունը նշա-
նակում ե, վոր վերջին ժամանակներս մեզանում ծնունդ են ա-
ռել վորոշ քանակով վոչ-հաստատուն կոլտնտեսություններ, վո-
րոնք այժմ մաքրվում են անկայուն տարրերից: Այդ նշանակում
ե, վոր փետուն կոլտնտեսությունները կանհետանան, հաստատուն-
ները կիման ու կամրանան: Յես կարծում եմ, վոր սա միան-
դամայն նորմալ յերեւյթ է: Միքանի ընկերներ սրանից հուսա-
հատության մեջ են ընկնում, խուճապի յեն մատնվում ու ջա-
ձորեն կառչում են ուղղած տոկուններին: Մյուսները չարա-
խնդում են ու կոլտնտեսային շարժման «տապալում» են գուշա-
կում: Թե՛ նրանք, թե՛ սրանք հեռու յեն կոլտնտեսային շարժման եյու-
թյունը մարքսիստորեն ըմբռնելուց:

Կոլտնտեսություններից հետանում են, ամենից առաջ, այս-
պես կոչված՝ մեռյալ հոգիները: Այդ նույնիսկ վո՞չ թե հեռա-
նալ ե, այլ զատարկությունը յերեան հանել: Արդյոք մեզ հար-
կավո՞ր են մեռյալ հոգիները: Իհարկե, հարկավոր չեն: Յես
կարծում եմ, վոր հյուսիսային-կովկասցիները և ուկրաինացինե-
րը միանդամայն ճիշտ են վարվում, յեր նրանք ցրում են մե-
ռյալ հոգիներ ունեցող կոլտնտեսությունները և կաղմակերպում
են իրոք կենդանի ու իրոք կայուն կոլտնտեսություններ: Սրանից
կոլտնտեսային շարժումը միայն շահում է:

Յերկրորդ, հեռանում են անհարազատ, մեր գործին ուղ-

դակի թշնամի տարրերը։ Պարզ է, վոր այդպիսի տարրերն ինչ-քան ավելի շուտ գուրս վրադիւն, այնքան ավելի լավ կու-անտեսային շարժման համար։

Վերջապես, հեռանում են տատանվող տարրերը, վորոնց վո՞չ անհարազատ կարելի յե անվանել, վո՞չ ել մեռյալ հոգիներ։ Այդ հենց այն դյուզացիներն են, վորոնց այտք մենք դեռ չենք կա-րողացել համոզել, վոր մեր գործն արդարացի յե, բայց վորոնց մենք անզատճառ կամողնք վաղը։ Այդպիսի դյուզացիների հեռանալը լուրջ, թեև ժամանակավոր, կորուստ և կոլտնտեսային շարժման համար։ Այդ պատճառով կոլտնտեսությունների տա-տանվող տարրերի համար մզվող պայքարն այժմ կոլտնտեսային շարժման ամենակենսական խնդիրներից մեկն ե։

Դուրս ե դալիս, վոր դյուզացիների մի մասի տեղատվու-թյունը կոլտնտեսություններից՝ միայն բացասական յերեսութ-չե։ Դուրս ե դալիս, վոր, ինչ չափով այդ տեղատվությունն ազատում և կոլտնտեսությունները մեռյալ հոգիներից և ուղղակի անհարազատ տարրերից, դա նշանակում է կոլտնտեսությունների առողջացման ու ամրացման բարերար պրոցես։

Մի ամիս սրանից առաջ գտնում եին, վոր հատիկային մար-դերում մենք ունենք 60%-ից ավելի կոլեկտիվացում։ Այժմ պարզ է, վոր յեթե նկատի ունենանք իսկական ու փոքրիշատե կայուն կոլտնտեսությունները, ապա այդ թիվն ակներեաբար չափազանց-ված եր։ Յեթե կոլտնտեսային շարժումը դյուզացիների մի մասի տեղատվությունից հետո ամրանա ու մնա հատիկային մարդերի կոլեկտիվացման 40% թվի վրա,—իսկ այդ հաստատապես իրա-դորձելի յե,—ապա այդ կլինի կոլտնտեսային շարժման մեծա-գույն նվաճումը տվյալ մոմենտին։ Յես միջին թիվ եմ վերցնում հատիկային մարդերի համար, լավ իմանալով, վոր մեղանում ընդունին կան համատարած կոլեկտիվացման առանձին շրջաններ 80—90% թվանշանով։ Կոլեկտիվացման 40% հատիկային մար-դերում—սա նշանակում ե, վոր կոլեկտիվացման հնդամյա սլանը մենք կարողացանք կրկնակի չափով իրագործել 1930 թ. գար-նան մոտերքը։

Ո՞վ վճռականություն կունենա ժիտելու ԽՍՀՄ-ի սոցիալիս-տական զարդացման գործում յեղած այս պատմական նվաճման վեռողական բնույթը։

ՑՈՒՑԵՐՈՒԹ ՀԱՐՑ։ Արդյոք լա՞վ են վարվում տատանվող դյուզացիները՝ կոլտնտեսություններից հեռանալով։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՆ ՎՈ՞Շ, նրանք լավ չեն վարվում։ Կոլտնտեսու-թյուններից հեռանալով՝ նրանք հենց իրենց սեփական շահերին են դեմ զնում, վորովհետեւ միայն կոլտնտեսություններն են գյուղացիներին կարիքից ու խավարից գուրս գալու յելք տալիս։ Կոլտնտեսություններից հեռանալով՝ նրանք իրենց դնում են վատթարագույն գրության մեջ, վորովհետեւ իրենց զրկում են այն արտոնություններից ու ոգուտներից, վոր Խորհրդացին իշ-խանությունն ընձեռնում է կոլտնտեսություններին։ Կոլտնտե-սություններում յեղած սխալներն ու ծոռւմները գուրս գալու փաստարկ չեն։ Սխալները հարկավոր ե ուղղել ընդհանուր ուժե-րով՝ մնալով կոլտնտեսության մեջ։ Դրանք ավելի ևս հեշտ ուղղել այն պատճառով, վոր Խորհրդացին իշխանությունը բոլոր ուժերով կավելու յե դրանց դեմ։

ԼԵՆԻՆՆ ասում ե, վոր

«Մանր տնտեսության սիստեմը ապրանքային արտադրու-թյան պայմաններում ի վիճակի չե փրկելու մարդկությունը մասսաների թշվառությունից ու մասսաներին կեղեգվելուց» (Հ. XX, եջ 122)։

ԼԵՆԻՆՆ ասում ե, վոր

«Մանր տնտեսությամբ մարդ կարիքից դաւրս չի կարող դալ» (Հ. XXIV, եջ 540)։

ԼԵՆԻՆՆ ասում ե, վոր

«Յեթե մենք առաջմա նման նստենք մանր տնտեսություն-ներում, թեկուզ և վորպես ազատ քաղաքացիներ ազատ հո-ղի վրա, մեղ, միենույն ե, անխուսափելի կորուստ և սպառ-նում» (Հ. XX, եջ 417)։

ԼԵՆԻՆՆ ասում ե, վոր

«Միայն ընդհանուր, արտելային, ընկերային աշխա-տականի ողությամբ կարելի յե դուրս գալ այն փակուղուց, ուր քչել և մեզ իմպերիալիստական պատերազմը» (Հ. XXIV, եջ 537)։

ԼԵՆԻՆՆ ասում ե, վոր

«Անհրաժեշտ և անցնել ընդհանուր մշակման խոշոր որի-նակելի անտեսություններում», վորովհետեւ «առանց դրան

չի կարելի դուրս գալ այն վիլուզումից, այն ուղղակի հուսահատական գրությունից, վորի մեջ դտնվում և Ռուսաստանը» (Հ. XX, էջ 418):

Ի՞նչ և նշանակում այս ամենը:

Այս նշանակում ե, վոր կոլտնտեսությունները միակ միջոցն են, վորը գյուղացիներին կարիքից ու խավարից դուրս գալու յեւք ե տալիս:

Պարզ ե, վոր գյուղացիները ճիշտ չեն վարդում՝ կոլտնտեսություններից դուրս գալով:

Լենին ասում ե, վոր

«Դուք, իշարկե, բոլորդ ել գիտեք Խորհրդային իշխանության ամբողջ գործունեյությունից, թե մենք ինչպիսի հակայական նշանակություն ենք տալիս կոմունաներին, արտեներին և առհասարակ ամեն տեսակի կազմակերպություններին, վորոնց նպատակն ե մանր, միանձնյա գյուղացիական տնտեսությունը հանրայինի, ընկերայինի կամ արտելայինի փոխարկել, աստիճանաբար աջակցել այդ վորինարկմանը» (Հ. XXIV, էջ 579):

Լենին ասում ե, վոր

«Խորհրդային իշխանությունը կոմունաներին ու ընկերություններին ուղղակի առավելություն ե տվել՝ առաջին աեղք գնելով նրանց»¹ (Հ. XXIII, էջ 399):

Ի՞նչ և նշանակում այս:

Այս նշանակում ե, վոր Խորհրդային իշխանությունը կոլտնտեսություններին արտօնություններ ու առավելություններ և տալու՝ միանձնյա տնտեսությունների հանդեպ: Այս նշանակում ե, վոր նա կոլտնտեսություններին արտօնություններ և տալու թե՛ հող հատկացնելու իմաստով, թե՛ մեքենաներ, տրակտորներ, սերմացու հատիկ մատակարարելու իմաստով և այլն, թե՛ հարկման թեթևացման իմաստով, թե՛ վարկեր տրամադրելու իմաստով:

Խորհրդային իշխանությունն ինչո՞ւ յե արտօնություններ ու առավելություններ տալիս կոլտնտեսություններին:

Այն պատճառով, վոր կոլտնտեսությունները գյուղացիներին թշվառությունից ազատելու միակ միջոցն են:

Այն պատճառով, վոր կոլտնտեսություններին արած առավելական ողնությունը չքավորությանն ու միջակներին ողնելու մենից իրական ձեռն ե:

Որերս Խորհրդային իշխանությունը վորոշեց հարկումից յերկու տարավ ազատել կոլտնտեսությունների հանրայնացված բուլոր բանող անասուններին (ձիերին, յեղներին և այլն), ինչպես կոլտնտեսությունների կողեկտիվ տիրապետության տակ դառնվող, այնպես ել կոլտնտեսականների անհատական տիրապետության տակ դառնվող բուլոր կովերին, խոզերին, վոչխարներին ու թռչուններին:

Բացի դրանից, Խորհրդային իշխանությունը վճռել ե մինչեւ տարվա վերջը հետաձգել կոլտնտեսականներին տրված վարկերի պարտքի մարումը և վերացնել կոլտնտեսությունները մտած դյուդացիների վրա մինչեւ ապրիլի 1-ը դրված բուլոր տուգանքներն ու դատական տուժանքները:

Վերջապես, նա վճռել ե անպատճառ իրականացնել կոլտնտեսականներին ներկա տարում 500 միլիոն ռուբ. չափով վարկավորելը:

Այս արտօնությունները կողնեն գյուղացի-կոլտնտեսականներին: Այս արտօնությունները կողնեն այն կոլտնտեսական գյուղացիներին, վորոնք կարողացել են անդրդվելի մնալ տեղատության հանդեպ, վորոնք կոփվել են կոլտնտեսությունների թշնամիների դեմ մզած պայքարում, վորոնք պաշտպանել են կոլտնտեսությունները և իրենց ձեռքումն են պահել կոլտնտեսային շարժման մեջ դրոշը: Այդ արտօնությունները կողնեն այն չքավոր ու միջակ կոլտնտեսականներին, վորոնք այժմ մեր կոլտնտեսությունների հիմնական կորիզն են կազմում, վորոնք կամրացնեն ու կձեւագորեն մեր կոլտնտեսությունները և վորոնք սոցիալիզմի կողմը կնվաճեն մելիոնավոր ու մելիոնավոր գյուղացիների: Այս արտօնությունները կողնեն այն գյուղացի-կոլտնտեսականներին, վորոնք այժմ կոլտնտեսությունների հիմնական կադրերն են կազմում և վորոնք միանդամայն արժանի յեն, վորակեալի նրանց կոլտնտեսային շարժման հերոսներ անվանենք:

Այդ արտօնությունները չեն առանա կոլտնտեսություններից հեռացած գյուղացիները:

Միթե պարզ չե, վոր գյուղացիները սխալ են գործում, յերբ հեռանում են կոլտնտեսություններից:

Միթե պարզ չե, վոր նրանք կոլտնտեսությունները վերա-

¹ Բնողջումն իմն ե: Ծ. Ստ.:

դառնալով միայն կարող են ապահովել իրենց համար այդ արտոնություններն ատանալը:

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՀԱՐՑ : Ի՞նչպես վարվենք կոմունաների հետ, հարկավոր չե՞ արդյոք ցրել նրանց :

ՊԱՏԱՍԽԱՆ : Վո՞չ, հարկավոր չե ու կարիք չկա ցրելու նրանց : Յես խոսում եմ իրական, և վոչ թե թղթե կոմունաների մասին : ԽՍՀՄ-ի հատիկային մարզերում գոյություն ունեն միշտաք հոյակապ կոմունաներ, վորոնք արժանի յեն, վորպեսզի նրանց խրախուսներ ու աջակցենք : Յես նկատի ունեմ հին կոմունաները, վորոնք դիմացել են տարիների փորձություններին ու կոփվել են պայքարում, լիովին արդարացնելով իրենց գոյությունը : Ինչ վերաբերում ե նոր կոմունաներին, վորոնք մոտ ժամանակներս են միայն կազմվել, ապա նրանք իրենց գոյությունը կկարողանան պաշտպանել միայն այն դեպքում, յեթե նրանք կամավոր կերպով են կազմակերպվել, գյուղացիների ակտիվ աջակցությամբ, առանց կենցաղի հարկադրական հանրայնացման :

Կոմունաներ կազմելն ու վարելը բարդ ու դժվար գործ է : Խոշոր ու կայուն կոմունաները կարող են գոյություն ունենալ ու զարգանալ փորձառու կարբերի ու փորձված ղեկավարների առկայության դեպքում միայն : Արտելի կանոնադրությունից հազճեպ կերպով կոմունաների կանոնադրության փոխադրվելը կարող ե միայն վանել գյուղացիներին կոլտնտեսային շարժումից : Այս պատճառով այդ գործին հարկավոր ե վերաբերվել հատուկ լրջությամբ և առանց վորկից շտապողականության : Արտելն ավելի հեշտ գործ ե և ավելի յե մատչելի լայն գյուղացիական մասսաների գիտակցությանը : Այդ պատճառով արտելը տվյալ մոմենտին կոլտնտեսային շարժման ամենից տարածված ձևն է : Գյուղատնտեսական արտելների ամրացմամբ ու ամրապնդմամբ միայն կարող ե հող ստեղծվել, վորպեսզի դյուղացիները մասսայաբար շարժվեն կոմունայի կողմը : Այս պատճառով կոմունան, վորը բարձրագույն ձևն ե, կարող ե կոլտնտեսային շարժման դիմակոր ողակ դառնալ միայն ապագայում :

ԻՆՍԵՐՈՐԴԻ ՀԱՐՑ : Ի՞նչպես վարվենք կուլակության հետ :

ՊԱՏԱՍԽԱՆ : Մինչեւ այժմ մեղանում խոսքը միջակի մասին եր : Միջակը բանվոր դաստակարդի գաշնակիցն ե, և մեր քաղաքականությունը նրա նկատմամբ բարեկամական պետք ե լինի : Ուրիշ բան ե կուլակը : Կուլակը նորհրդային իշխանության թշնամին ե : Մեր ու նրա միջև հաշտություն չկա և չի ել կարող մնել : Մեր քաղաքականությունը կուլակության նկատմամբ՝

նրան վորպես դաստակարդ վերացնելու քաղաքականությունն է : Այս, իհարկե, չի նշանակում, թե մենք նրան կարող ենք մեկնեմեկ վերացնել : Բայց այս նշանակում է, վոր մենք գործն այնպիսի ուղղությամբ պետք ե տանենք, վորպեսզի շրջապատենք կուլակությանը ու լիկվիդացիայի յենթարկենք :

Ահա թե ինչ ե ասում Լենինը կուլակի մասին .

«Կուլակները—ամենազազային, ամենակոպիտ, ամենավայրենի շահագործողներն են, վորոնք այլ յերկիրների պատմության մեջ քանից վերականգնել են կալվածատերերի, թագավորների, տերտերների, կապիտալիստների իշխանությունը : Կուլակները կալվածատերերից ու կապիտալիստներից շատ են : Բայց և այսպես կուլակները փոքրամասնություն են ժողովրդի մեջ... Այդ արյունաբրուները հարստացել են ժողովրդի կարիքն ողտագործելով պատերազմի ժամանակ, նրանք հաղարներով ու հարյուր հաղարներով փող են կուտակել՝ հացի ու մյուս մթերքների գները բարձրացնելով : Այդ սարդերը ճարպակալել են պատերազմից քայլած գյուղացիների հաշվին, քաղցած բանվորների հաշվին : Այդ տղբուկներն աշխատավորների արյունն են խմել՝ այնքան ավելի հարստանալով, վորքան ավելի յեր սովածմնում բանվորը քաղաքներում ու Փաբրիկաներում : Այդ վամպիրներն իրենց ձեռքն են հավաքել ու հավաքում են կալվածատիրական հողերը, նրանք նորից ու նորից սորկացնում են չքալոր գյուղացիներին» (Հ. XXIII, էջ 206—207) :

Մենք հանգուրժում եյինք այդ արյունաբրուներին, սարդերին ու վամպիրներին, նրանց շահագործողական տենդենցների սահմանափակման քաղաքականություն կիրառելով : Հանդուրժում եյինք, վորովհետեւ վոչնչով չեյինք կարող փոխարինել կուլակային տնտեսությունը, կուլակային արտադրությունը : Այժմ մենք հնարավորություն ունենք հավելուրդով փոխարինելու նրանց տնտեսությունը մեր կոլտնտեսությունների ու խորհանտեսությունների տնտեսությամբ : Այդ սարդերին ու արյունաբրուներին այլև հանդուրժելու կարիք չկա : Այսուհետեւ ել հանդուրժել այդ սարդերին ու արյունաբրուներին, վորոնք հրկիզում են կոլտնտեսությունները, սպանում են կոլտնտեսային գործիչներին ու փորձում են վիժեցնել ցանքը—նշանակում ե բանվորների ու գյուղացիների շահերի դեմ գնալ :

Ուստի կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը պետք է կիրառվի այն ամրողջ հաստատակամությամբ ու հետեղականությամբ, վորին միայն բոլէւիկներն են ընդունակ:

ՏԱՄՆԵՐՈՐԴԻ ՀԱՐՑ : Վո՞րն է կոլտնտեսությունների մերձակորագույն դործնական խնդիրը:

ՊԱՏԱՍԽԱՆՆՈՒԹՅՈՒՆ : Կոլտնտեսությունների մերձակորագույն դործնական խնդիրն է՝ պայքարել ցանքի համար, պայքարել ցանքի տարածություններն ամենամեծ չափով ընդարձակելու համար, պայքարել ցանքը ճիշտ կազմակերպելու համար:

Յանքի խնդրին այժմ պետք է հարմարեցվեն կոլտնտեսությունների մյուս բոլոր խնդիրները:

Յանքի կազմակերպման աշխատանքին այժմ կոլտնտեսություններում պետք է յենթարկվեն մյուս բոլոր աշխատանքները:

Այս նշանակում է, վոր կոլտնտեսությունների ու նրանց անկուսակցական ակտիվի կայունությունը, կոլտնտեսությունների դեկավարների ու նրանց բոլշեկիյան կորիզի ընդունակությունն ստուգելու յեն վո՞չ թե ճռուան բանաձեռքով ու մեծախոսում վողջույններով, այլ ցանքի ճիշտ կազմակերպման կենդանի դործով:

Բայց դործնական այս խնդիրը պատվով իրագործելու համար հարկավոր է կոլտնտեսային աշխատանքների ուշադրությունը դարձնել կոլտնտեսային շինարարության տնտեսավարական հարցերի կողմը, ներկայտնեսային շինարարության հարցերի կողմը:

Մինչև վերջին ժամանակներս կոլտնտեսային աշխատողների ուշադրության կենտրոնում գտնվում եր կոլեկտիվացման բարձր թվերի հետեւ ընկնելը, ընդվորում մարդիկ չեյին ուղղում տեսնել իրական կոլեկտիվացման և թղթե կոլեկտիվացման միջև յեղած տարբերությունը: Այժմ թվերով այլպես տարբելը պեն նետվի: Այժմ աշխատողների ուշադրությունը պետք է կենտրոնանա կոլտնտեսությունների ամրացման վրա, կոլտնտեսությունների կազմակերպական ձևավորման վրա, կոլտնտեսություններում դործարար աշխատանք կազմակերպելու վրա:

Մինչև վերջին ժամանակներս կոլտնտեսային աշխատողների ուշադրությունը կենտրոնացած եր կոլտնտեսային խոչըր միավորներ կազմակերպելու վրա, այսպես կոչված՝ «գիգանտների» կազմակերպման վրա, ընդվորում՝ «գիգանտները» հաճախ այլասերվում, դառնում եյին ծանրաշարժ թղթե պարետություններ, վորոնք շենքերում ու գյուղերում զուրկ եյին տնտեսական ար-

ժամանելից: Հետեաբար ցուցական աշխատանքը կլանում եր գործական աշխատանքին: Այժմ այդ ցուցական կողմով տարվելը պետք է դեն նետվի: Այժմ աշխատողների ուշադրությունը պետք է սրվի կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական աշխատանքի վրա շենքերում ու գյուղերում: Եեր այդ աշխատանքը պատշաճ հաջողություններ ցույց կտա, «գիգանտներն» իրենք իրենց յերևան կտան:

Մինչև վերջին ժամանակներս միջակներին կոլտնտեսություններում զեկավար աշխատանքի մասնակից անելու վրա քիչ ուշադրություն եր դարձվում: Մինչդեռ միջակների մեջ կան յերեկելի տնտեսատերեր, վորոնք կարող կլինելին կոլտնտեսային շինարարության հոյակապ տնտեսավարական աշխատողներ դառնալ: Այժմ մեր աշխատանքի այդ բացը պետք է վերացվի: Այժմ խընդեմ մեր աշխատանքի այդ բացը պետք է վերացվի: Այժմ խընդեմ զեկավար աշխատանքի դիրն այն է, վոր կոլտնտեսությունների զեկավար աշխատանքի ներգրավենք միջակների միջից լավագույն մարդկանց և նրանց հնարավորություն տանք ծավալելու այս դործում իրենց ընդունակությունները:

Մինչև վերջին ժամանակներս բավականաչափ ուշադրություն չեյին դարձնում գեղջկուհիների շրջանում կատարվող աշխատանքի վերը: Անցած ժամանակաշրջանը ցույց տվեց, վոր գեղջկուհիների շրջանում կատարվող աշխատանքը մեր աշխատանքի ամենից թույլ տեղն է: Այժմ այդ բացը պետք է վերացվի վճռաբար ու անդապնավորեն:

Մինչև վերջին ժամանակներս մի շարք շրջանների կոմունիստներ յելնում եյին այն բանից, թե իրենք իրենց սեփական ուժեղ կարող են լուծել կոլտնտեսային շինարարության բոլոր լուսդիրները: Դրանից յելնելով՝ նրանք բավականաչափ ուշադրություն չեյին դարձնում անկուսակցականներին կոլտնտեսություններում պետք է առաջ գալու առաջ քաշելու վրա, անկուսակցականներին կոլտնտեսություններում զեկավար աշխատանքի առաջ քաշելու վրա, կոլտնտեսություններում անկուսակցական լայն ակտիվ կազմակերպելու վրա: Մեր կուսակցության պատմությունն ապացուցել ե, իսկ կոլտնտեսային շինարարության անցած ժամանակաշրջանն ել մի ավելորդ անդամ ցույց տվեց, վոր այլպիսի գերբարձրումն արմատապես սխալ է: Յեթե կոմունիստները պարփակվելին իրենց կեղեկի մեջ, պարապով սահմանազարդելով անկուսակցականներից, նրանք ամրողջ գործը կկործանելին: Յեթե կոմունիստներին հաջողվում եր փառավորանուն վաստակել սոցիալիզմի համար մղած մարտերում, իսկ կո-

մունիզմի թշնամիները ջախջախոված եյին գուրս գալիս, ապա այդ-
լինում եր, ի միջի այլոց, այն պատճառով, վոր կոմունիստները
կարողանում եյին գործի ներգրանիկ անկուսակցականների լավա-
գույն մարդկանց, նրանք կարողանում եյին ուժեր քաղել անկու-
սակցականների լայն խավերի միջից, նրանք կարողանում եյին ի-
րենց կուսակցությունը ըրջապատել անկուսակցական լայն ակտիւ-
թով: Այժմ այս բացը անկուսակցականների նկատմամբ կատարվող
մեր աշխատանքի մեջ պետք է վերացվի վճռաբար ու անդառնա-
լիորեն:

Ուղղել մեր աշխատանքի այս բացերը, արմատապես վերացնել դրանք, հենց այս ե, վոր նշանակում ե ռելքերի վրա դնել կոլտնտեսությունների տնտեսավարական աշխատանքը:

Այսպես ուրեմն՝

- 1) Յանքը ճիշտ կազմակերպել—այս և խնդիրը:
 2) Ուշադրությունը կենտրոնացնել կողմնակային շարժման
 տնտեսական հարցերի վրա,—այս և այն միջոցը, վորոն անհրա-
 ժեշտ և այդ խնդիրը լուծելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Правда» № 92.
3 шәпкән 1930 р.



Դիմապուրյան հաջողություններից 5
Պատասխան ընկեր կողանակեալաններին 15

4092

Հայ. Թարգմ. Խմբ. Ս. Կիրակոսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Վ. Զիդեշյան

Կոնտրոլ ուղարկողիչ Լ. Աբովյան

Գլամիլիսի լիազոր Ի-9708, հրատ. № 470,

Պատվ. № 126, ակտաժ 10,000, ինդեքս $\frac{\text{II}}{\text{PK}}$

Հանձնվել եւ արտադրության 11/VII 1937 թ.

Ստորագրված եւ տպագրելու 3 /VIII 1937 թ.

Գինը 60 կ.

Հայկական տպարան, Եկեղեց, Ալահվերդյան 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0185654

ԳԻՒԾ 60 Կ.

И. СТАЛИН

ГОЛОВОКРУЖЕНИЕ ОТ УСПЕХОВ



ОТВЕТ ТОВАРИЩАМ КОЛХОЗНИКАМ

Армпартиздат, Ереван, 1987